

## **ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

Ազգային ժողովի պատգամավորներ Անդրանիկ Քոչարյանի, Մխիթար Հայրապետյանի և Արման Բաբաջանյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացվել են ««Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»», ««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը (փաստաթղթային կողեր՝ Պ-729-11.09.2020-ՊԱ-011/0, Պ-729<sup>1</sup>-11.09.2020-ՊԱ-011/0, Պ-729<sup>2</sup>-11.09.2020-ՊԱ-011/0) (այսուհետ միասին նաև՝ Նախագծերի փաթեթ):

Նախագծերի փաթեթով առաջարկվող փոփոխություններն ու լրացումները հիմնականում ուղղված են երկու խնդիրների լուծմանը. առաջինը՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության և անվտանգության բնագավառում ծագող հասարակական հարաբերությունների պաշտպանությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով՝ խստացվում են քրեաիրավական կարգավորումները՝ երկարաձգելով արգելված արարքների համար սահմանված վաղենության ժամկետները և բարձրացնելով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով սահմանված ազատազրկման ձևով պատիժների նվազագույն և առավելագույն չափերը, երկրորդը՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածում լրացվում է խրախուսող նորմ՝ հայրենադարձության ապահովման նպատակով, որին տրվում է հետադարձ ուժ:

**Նախագծերի փաթեթը ենթակվել է իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության: Կատարված փորձաքննությունների արդյունքում պարզվել են իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական բնույթի խնդիրներ:**

Ստորև ներկայացվում են մասնագիտական փորձաքննության եզրակացությունները, ինչպես նաև Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

**ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ**

**ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ**

**ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

**ԱՆԻ ՄՈՒԹԱՖՅԱՆ**

07.10.2020թ.

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

««Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կող՝ Պ-729-11.09.2020-ՊԱ-011/0), «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կող՝ Պ-729<sup>1</sup>-11.09.2020-ՊԱ-011/0), ««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կող՝ Պ-729<sup>2</sup>-11.09.2020-ՊԱ-011/0) վերաբերյալ

Ազգային ժողովի պատգամավորներ Անդրանիկ Քոչարյանի, Միսիթար Հայրապետյանի և Արման Բարաջանյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված ««Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը (այսուհետ միասին՝ Նախագծերի փաթեթ) իրավական փորձաքննության են ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության պետախրավական փորձաքննության բաժնում:

### ***Իրավական փորձաքննության արդյունքները***

Նախագծերի փաթեթը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից նշենք հետևյալը.

1. ««Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերնագրում առաջարկում ենք «ՀՀ ԱՆՁՈՒՄՆԵՐ» բառից հետո նշել «ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառերը՝ իիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխությունները կատարվում են նրա առանձին՝ բառեր, թվեր կամ կետադրական նշաններ այլ բառերով, թվերով կամ կետադրական նշաններով փոխարինելու միջոցով, և հաշվի առնելով այն որ Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 2-րդ մասի 1-ին կետով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում (այսուհետ նաև՝ Օրենք) կատարվում են նաև փոփոխություններ:

2. Նախագծի 1-ին և 3-րդ հոդվածների, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի

Նախագծի 1-ին հոդվածի մասերի և կետերի համարակալումն առաջարկում ենք համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ և 7-րդ մասերին, դրանք են՝ *օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների, հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի և օրենսդրական ակտի հոդվածները, մասերը և կետերը համարակալվում են արարական բվանշաններով, ենթակետերը համարակալվում են հայերենի այրութենի փոքրաստառերով, մասերի համարները տեքստից բաժանվում են սիցակետերով, իսկ հոդվածների կետերի համարները՝ փակագծերով:*

3. Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում Օրենքում լրացվող բառերից հետո առաջարկում ենք գրել «կետադրական նշանը և բառերը» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը՝ նորմատիվ իրավական ակտում լրացումներ կատարվում են դրանում նոր բաժիններ, գլուխներ, հոդվածներ, մասեր, կետեր, ենթակետեր, պարբերություններ, նախադասություններ, բառեր, թվեր կամ կետադրական նշաններ լրացնելու միջոցով:

4. Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասում լրացվող նոր՝ 4-րդ կետը, այն է՝ «*4) Օրենքի խախտմամբ գրակոչին չներկայացած շարքային կազմի և պահեստագորի սպայական կազմի համար սույն մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված ժամկետը երկարաձգվում է մեկ ամսով՝ յուրաքանչյուր չգորակոչված (խոսափած) գորակոչի համար», խախտում է Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի շարադասությունը: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք խմբագրել Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասում լրացվող 4-րդ կետը կամ նախատեսվող լրացում կատարել այլ տեղում: Սիաժամանակ հարկ է նկատել, որ «չգորակոչված (խոսափած) գորակոչի» ձևակերպումն ունի հստակեցման կարիք:*

5. Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասում լրացվում է նոր՝ 7-րդ կետ, որով նախատեսվում է Կառավարության որոշմամբ սահմանաված կարգի ընդունում՝ «*7) սույն օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում նշված բաղադրացիների հետ:* Պայմանագրային զինվորական ծառայության ընթացքում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելու համար սույն կետում նշված բաղադրացիների կողմից վճարած պայմանագրային զինվորական ծառայողի երկու տարվա

աշխատավարձի և հավելավճարների չափով գումարը ենթակա է վերադարձման  
կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «5. Եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում են նաև՝

1) օրենսդրական ակտի այն մասերը, որոնք գործելու են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից.

2) ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը»: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Նախագծի անցումային դրույթով նախատեսել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը:

Միաժամանակ հարկ է նկատել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ: Օրենքում Կառավարության մասին նշում կատարելիս կիրառվում են «Հայաստանի Հանրապետության կառավարություն» բառը: Ուստի, առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր՝ 7-րդ կետում «կառավարության» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերով:

6. Նախագծի 4-րդ հոդվածով օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետ է սահմանվում հրապարակմանը հաջորդող օրը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ «1. Նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում դրանցում սահմանված ժամկետներում, սակայն ոչ շուտ, քան դրանց պաշտոնական իրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով սահմանված է, որ տվյալ նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց հետո՝ անմիջապես:

2. Նորմատիվ իրավական ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինը պարտավոր է նախատեսել նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելու ավելի ուշ ողջամիտ ժամկետ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված նորմատիվ իրավական ակտերի, եթե ակտով սահմանվում են այնպիսի իրավակարգավորումներ, որոնց համար անհրաժեշտ է

իհմնավոր ժամանակահատված, որը հնարավորություն կտա հասցեատիրոք իր վարրագիծը համապատասխանեցնելու սահմանված պահանջներին, կամ սահմանված իրավակարգավորումները վատթարացնում են անձի իրավական վիճակը:»:

Հարկ է նկատել, որ Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասում լրացվող նոր՝ 4-րդ կետով սահմանված իրավակարգավորումը վատթարացնում է անձի իրավական վիճակը: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսված կարգավորումը խմբագրել:

Եզրակացության սույն կետում արված դիտարկումները և առաջարկը վերաբերելի են նաև «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող կարգավորմանը: Միաժամանակ՝ անհրաժեշտ է Նախագծերի փաթեթում ներառված ««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով սահմանված օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը ևս համապատասխանեցնել փաթեթում ներառված մյուս նախագծերի համապատասխան կարգավորումներին:

Վերոգրյալից բացի՝ հարկ ենք համարում նկատել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 23-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Անհետաձգելի համարվող օրենքները, ուազմական կամ արտակարգ որությամբ պայմանավորված նորմատիվ իրավական ակտերը կարող են ուժի մեջ մտնել իրապարակվելուց հետո՝ անմիջապես, այդ ակտով նախատեսված իմելու դեպքում:»:

7. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասով նոր խմբագրությամբ է շարադրվում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրը) 327-րդ հոդվածի 1-ին մասը.

**«Պարտադիր գինվորական կամ այլընտրանքային ծառայության հայտարարված գորակոչից կամ անցկացվող վարժական հավաքից խուսափելով՝ այդ գորակոչից տարկետուս ստանալու կամ ծառայությունից կամ վարժական հավաքից ազատվելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերի բացակայության դեպքում՝ պատժվում է կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով. կամ ազատազրկմամբ՝ ստավելագույնը վեց տարի ժամկետով:»:**

Օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. **Ժամկետային գինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական գորակոչից, վարժական հավաքից կամ գորահավաքային գորակոչից խուսափելով՝ այդ ծառայությունից ազատվելու՝ Հայաստանի**

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում՝

պատժում է կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով. կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:»:

Հարկ է նկատել, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Զինվորական ծառայության տեսակներն են՝

1) ժամկետային.

2) պահեստագորային.

3) զորահավաքային:»

Օրենքի նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ «Զորահավաքային զինվորական ծառայություն է համարվում օրենքով սահմանված դեպքերում հայտարարված զորահավաքի շրջանակներում զորահավաքային զորակոչի հիման վրա կազմակերպվող ծառայությունը: Զորահավաքային զինվորական ծառայությունն իրականացվում է մինչև զորահավաք հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքի՝ օրենքով սահմանված կարգով դադարեցումը»:

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասով նոր խմբագրությամբ շարադրվող 327-րդ հոդվածի 1-ին մասում, որպես հանրային վտանգավորություն ունեցող արարք, չի ներառվում զորահավաքային զորակոչից խոսափելը: Մինչդեռ՝ Նախագծերի փաթեթին կից ներկայացված հիմնավորման մեջ բացակայում են դիտարկումները քննարկվող փոփոխության վերաբերյալ: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում չի կարող վտանգավոր համարվող արարքն ապաքրեականացվել, եթե բացակայում են այդ արարքը այլևս վտանգավոր չհամարելու վերաբերյալ փաստարկված հիմնավորումները:

8. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 4-րդ մասով Օրենսգրքի 327-րդ հոդվածում լրացվում է նոր՝ 4-րդ մաս.

«4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված դեպքերում պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության հայտարարված զորակոչից խոսափած քանայոթ (պահեստագորի սպաները՝ երեսունինգ) տարին չլրացած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե անցել է պարտադիր ժամկետային զինվորական ծառայության, իսկ քանայոթ (պահեստագորի սպաները՝ երեսունինգ) տարին լրացած անձը՝

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով վճարել է շարքային կազմի պայմանագրային զինվորական ծառայողի երկու տարվա աշխատավարձի և հավելավճարների չափով գումարը:

**Վարժական հավաքից խուսափած անձը ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով վճարել է սահմանված գումարը»:**

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «5. Եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում են նաև՝

1) օրենսդրական ակտի այն մասերը, որոնք գործելու են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից.

2) ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը:»: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի անցումային դրույթով նախատեսել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման նախատեսվող ժամկետները:

9. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով կատարվող փոփոխությունների և լրացումների վերաբերյալ հարկ ենք համարում կատարել նաև հետևյալ դիտարկումը.

Նախագծերի փաթեթին կից ներկայացված հիմնավորման մեջ անդրադարձ է կատարվում միայն «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով լրացվող խրախուսող նորմի առկայության պարագայում՝ կատարված հանցագործության դեպքում սոցիալական արդարության վերականգնման հարցին, որի շրջանակներում հիմնավորվում է հայրենադարձության և պաշտպանության հարցում գումարների ներգրավվման, պաշտպանելու նպատակի ծանրակշիռ լինելը: Սակայն, հարկ է նկատել, որ Նախագծերի փաթեթին կից ներկայացված հիմնավորմամբ անդրադարձ չի կատարվում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով նախատեսվող հանցագործության կատարման դեպքում քրեական պատասխանատվությունից ազատվելու հիմքի նախատեսման պարագայում այդ խրախուսող նորմի ազդեցության գնահատմանը:

Մասնավորապես՝ չի դիտարկվում այն հարցը, թե ինչպիսին կլինի քրեական պատասխանատվությունից ազատվելու հնարավորության նախատեսման ազդեցությունը հանրության կողմից արգելված արարքի կատարման քանակական աճի վրա:

Կարծում ենք, որ նշված հարցերի դիտարկումը կարեոր է՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ օրենսդրի կողմից որպես հանցագործություն արարքը նախատեսելիս նպատակ է հետապնդվել պաշտպանելու հասարակական հարաբերությունների շրջանակ, որի պաշտպանությունը կարող է տուժել քննարկվող խրախուսական նորմի առկայության դեպքում:

### ***Եզրակացում***

Անփոփելով փորձաքննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Նախագծերի փաթեթով սահմանված կարգավորումները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: Սիամանակ առաջարկում ենք վերոգրյալ դիտարկումների հիման վրա ապահովել Նախագծերի փաթեթի համապատասխանությունը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքին:

**ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ**

**ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿՐԱՎԱԿԱՆ**

**ՓՈՐՁԱՔՆՍՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ**

**ԱՆԻ ՍՈՒԹԱՖՅՅԱՆ**

Կատարողներ՝ Ա. Մնացականյան (հեռ.՝ 011-513-248),  
Ն. Ներսիսյան (հեռ.՝ 011-513-248)

05.10.2020թ.

## **ՏԵՂԵԿԱՆՔ**

**Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման  
անհրաժեշտության բացակայության մասին**

Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման  
անհրաժեշտությունը բացակայում է:

**ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ**

**ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿՐԱՎԱԿԱՆ**

**ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ**

**ԱՆԻ ՍՈՒԹԱՖՅՅԱՆ**

Կատարողներ՝ Ս. Մնացականյան (հեռ.՝ 011-513-248),  
Ն. Ներսիսյան (հեռ.՝ 011-513-248)

05.10.2020թ.

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

««Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-729-11.09.2020-ՊԱ-011/0), «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (փաստաթղթային կոդ՝ Պ-729<sup>1</sup>-11.09.2020-ՊԱ-011/0) և ««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-729<sup>2</sup>-11.09.2020-ՊԱ-011/0) վերաբերյալ

Ազգային ժողովի պատգամավորներ Անդրանիկ Քոչարյանի, Մխիթար Հայրապետյանի և Արման Բաբաջանյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված ««Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագծերի փաթեթ) մասնագիտական փորձաքննության են ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության ֆինանսատեսագիտական փորձաքննության բաժնում:

### **Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արդյունքները**

1. Ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրների տեսանկյունից հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումները:

1.1 Նախագծերի փաթեթում ընդգրկված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 4-րդ կետով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի ՀՕ-528-Ն քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածը լրացնել նոր՝ 4-րդ մասով, ըստ որի՝

«4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված դեպքերում պարտադիր զինվորական կամ այլնութանքային ծառայության հայտարարված գորակոչից խուսափած քանյոթ (պահեստագորի սպաները՝ երեսունինգ) տարին չլրացած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե անցել է պարտադիր ժամկետային զինվորական ծառայության, իսկ քանյոթ (պահեստագորի սպաները՝ երեսունինգ) տարին լրացած անձը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով **վճարել** է շարքային կազմի պայմանագրային զինվորական ծառայողի երկու տարվա աշխատավարձի և **հավելավճարների չափով գումարը:**

Վարժական հավաքից խուսափած անձը ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով վճարել է սահմանված գումարը:»,

իսկ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 1-ին կետի «ք» ենթակետով առաջարկվում է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 7-րդ կետով (իսկ), ըստ որի՝

- Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում պայմանագրային զինվորական ծառայություն կարող են անցնել. «սույն օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում նշված քաղաքացիների հետ: Պայմանագրային զինվորական ծառայության ընթացքում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելու համար սույն կետում նշված քաղաքացիների կողմից վճարած պայմանագրային զինվորական ծառայողի երկու տարվա աշխատավարձի և հավելավճարների չափով գումարը ենթակա է վերադարձման կառավարության որոշմամբ սահմանված կարգով:»:

Նախագծերի փաթեթի հեղինակների կարծիքով՝ «պայմանագրային զինվորական ծառայողի երկու տարվա աշխատավարձի և հավելավճարների չափով գումարի վճարումը որպես քրեական պատասխանատվությունից ազատման հիմք տրամաբանական է, քանի որ պարտադիր զինվորական ծառայությունից խուսափած անձին փաստացի փոխարինում է պայմանագրային զինծառայողը, որի նկատմամբ պետությունը կրում է բազմաթիվ պարտավորություններ, այդ թվում՝ վարձատրության պարտավորություն և դրա չափով վճարումը որոշակիորեն վերականգնում է սոցիալական արդարությունը:»:

Չուտ իր պարտավորությունները չկատարելու դիմաց փոխառուցում վճարելու տեսանկյունից համաձայնելով տվյալ մտքի հետ, այդուհանդերձ, հարկ ենք համարում ներկայացնել երկու դիտարկում՝ կապված առաջարկվող դրույթի գործնական կիրառության հետ: Մասնավորապես, առաջարկվող լրացման տեքստից անհայտ է մնում՝

ա) թե ինչպե՞ս պետք է որոշվի «պայմանագրային զինվորական ծառայողի երկու տարվա աշխատավարձի և հավելավճարների չափով գումարը», եթե գործնականում պայմանագրային զինծառայողները ստանում են աշխատավարձի տարբեր չափեր՝ կախված ծառայության ժամկետից, զինվորական կոչումից, զինվորական պաշտոնից և այլն (տե՛ս «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց

վարձատրության մասին» օրենքի 16-րդ հոդվածը և 3-րդ հավելվածը), ուստի այս առումով միասնական վճարի սահմանման անհրաժեշտություն է առաջանում,

բ) նշված «երկու տարվա աշխատավարձի և հավելավճարների չափով գումարի» մեջ մտնու՞մ են արդյոք հարկերը և պարտադիր այլ վճարները, թե՞ խոսքը գնում է զուտ աշխատավարձի (եկամտի) մասին:

1.2 Ինչպես արդեն նշվեց, Նախագծերի փաթեթում ընդգրկված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 4-րդ կետով առաջարկվում է սահմանել նաև հետևյալը. «Վարժական հավաքից խուսափած անձը ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով վճարել է սահմանված գումարը»:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ թեև հստակ սահմանված չէ, բայց առաջարկվող լրացման տեքստից և դրա էությունից բխում է, որ գորակոչից տարիներ շարունակ խուսափած և մեկ անգամ վարժական հավաքից խուսափած անձինք դրվում են նույն հարթության վրա և պետք է վճարեն նույն գումարը, ինչը ոչ միայն համաշափ մոտեցում չի կարելի համարել, այլև գործնականում վարժական հավաքներին չմասնակցելը վեր է ածում վճարովի հիմունքներով իրականացվող գործողության: Բացի այդ, տվյալ դեպքի (վարժական հավաքի) առումով առկա չի լինում նաև Նախագծերի փաթեթի ներկայացման համար հիմք հանդիսացող հիմնավորումը, այն է՝ վարժական հավաքին չներկայացած անձի փոխարեն որևէ մեկի (այդ թվում՝ նաև պայմանագրային գինծառայողների) կողմից ծառայություն չի իրականացվում, ուստի նաև փոխհատուցման խնդիր չի կարող առաջանալ:

## 2. Նախագծերի նշված լրացումների հետ կապված առաջարկում ենք՝

ա) սահմանել, որ պայմանագրային գինվորական ծառայողի երկու տարվա աշխատավարձի և հավելավճարների գումարի չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ինչը հնարավորություն կտա միջինացված կամ այլ կարգով որոշել վճարի այնպիսի չափ, որը կփոխհատուցի պայմանագրային գինծառայողի վարձատրության հետ կապված ծախսերը՝ ներառյալ արձակուրդային վճարները, պարզեատրումները և այլն: Տվյալ մոտեցման դեպքում կվերանա նաև հիշյալ վճարի մեջ հարկերի և պարտադիր այլ վճարների ներառման կամ չներառման հետ կապված հստակեցումների կատարման անհրաժեշտությունը,

բ) հանել Նախագծերի փաթեթում ընդգրկված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 4-րդ կետով առաջարկվող «Վարժական հավաքից խուսափած

անձը ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով վճարել է սահմանված գումարը:» պարբերությունը, կամ էլ սահմանել այս դեպքի հետ կապված առանձին (համարժեք) վճարի չափ (կամ այս մասով ևս լիազորել կառավարությանը), միաժամանակ հստակ ամրագրելով, որ սահմանված վճարի վճարումը անձին չի ազատում վարժական հավաքներին ներկայանալու իր պարտավորությունից, և որն էլ պետք է կատարվի հաջորդ հավաքի ժամանակ:

### **Եղանակում**

Նախագծերի փաթեթը ֆինանսատնտեսական հիմնահարցերի տեսանկյունից հստակեցման և լրամշակման կարիք է զգում:

**ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ  
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՍԱԳԻՏԱԿԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ                          ԱՐԹՈՒՐ ԹԱՍՍԶՅԱՆ**

(հեռ.՝ 011 513-668)

29.09.2020թ.

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

««Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին (փաստաթղթային կոդ՝ Պ-729-11.09.2020-ՊԱ-011/0), «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (փաստաթղթային կոդ՝ Պ-729<sup>1</sup>-11.09.2020-ՊԱ-011/0) և ««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» (փաստաթղթային կոդ՝ Պ-729<sup>2</sup>-11.09.2020-ՊԱ-011/0) օրենքների նախագծերի վերաբերյալ

Ազգային Ժողովի պատգամավորներ Անդրանիկ Քոչարյանի, Մխիթար Հայրապետյանի և Արման Բաբաջանյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված ««Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և ««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը (այսուհետ միասին՝ Նախագծերի փաթեթ) մասնագիտական փորձաքննության են ենթարկվել Ազգային Ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության սոցիալ, կրթական, առողջապահական փորձաքննության բաժնում:

### ***Սոցիալական փորձաքննության արդյունքները***

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով (փաստաթղթային կոդ՝ Պ-729<sup>1</sup>-11.09.2020-ՊԱ-011/0) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածում լրացվում է նոր՝ 4-րդ մաս: Լրացվող դրույթով նախատեսվում է, որ պարտադիր զինվորական կամ այլնստրանքային ծառայության հայտարարված գորակոչից խուսափած քանյոթ (պահեստագորի սպաները՝ երեսունինգ) տարին չլրացած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե անցել է պարտադիր ժամկետային զինվորական ծառայության, իսկ քանյոթ (պահեստագորի սպաները՝ երեսունինգ) տարին լրացած անձը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով վճարել է շարքային կազմի պայմանագրային զինվորական ծառայողի երկու տարվա աշխատավարձի և հավելավճարների չափով գումարը: Վարժական հավաքից խուսափած անձը ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով վճարել է սահմանված գումարը:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ ենք համարում նկատել, որ Նախագծերի փաթեթին կից ներկայացված հիմնավորման մեջ անդրադարձ է կատարվում միայն «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով լրացվող խրախուսող նորմի առկայության պարագայում կատարված հանցագործության դեպքում սոցիալական արդարության վերականգնման հարցին, որի շրջանակներում հիմնավորվում է հայրենադարձության և պաշտպանության հարցում գումարների ներգրավման, պաշտպանելու նպատակի ծանրակշիռ լինելը: Մինչդեռ Նախագծերի փաթեթին կից ներկայացված հիմնավորմամբ անդրադարձ չի կատարվում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով նախատեսվող հանցագործության կատարման դեպքում քրեական պատասխանատվությունից ազատվելու հիմքի նախատեսման պարագայում այդ խրախուսող նորմի ազդեցության գնահատմանը: Մասնավորապես՝ չի դիտարկվում այն հարցը, թե ինչպիսին կլինի քրեական պատասխանատվությունից ազատվելու հնարավորության նախատեսման ազդեցությունը հանրության կողմից արգելված արարքի կատարման քանակական աճի վրա:

Կարծում ենք, որ նշված հարցերի դիտարկումը կարևոր է՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ օրենսդրի կողմից որպես հանցագործություն արարքը նախատեսելիս նպատակ է հետապնդվել պաշտպանելու հասարակական հարաբերությունների շրջանակ, որի պաշտպանությունը կարող է տուժել քննարկվող խրախուսական նորմի առկայության դեպքում:

Հիմք ընդունելով վերոգրյալ՝ անհրաժեշտություն է առաջանում պարզել, թե Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում նման խրախուսական նորմի նախատեսումն արդյոք կարող է որևէ ազդեցություն բռնել զինվորական ծառայության ենթակա քաղաքացիների արտագաղթի քանակական ցուցանիշների վրա:

Վերոգրյալ հարցադրումը պարզելու նպատակով՝ Փորձագիտական և վերլուծական վարչության օրենսդրական մոնիթորինգի և տեղեկատվական բաժնի կողմից ձեռք են բերվել համայնավարական երկու կենտրոնի (Սոցիոմետր (անկախ սոցիոլոգիական կենտրոն) և ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի) իրականացրած սոցիոլոգիական հարցումների հաշվետվությունները, և կատարվել է համապատասխան ուսումնասիրություն:

Սոցիոմետրի կողմից հարցումը կատարվել է 2004 թվականին Երևանի և մարզերի դպրոցների շրջանավարտների և քոլեջների, ԵՊՀ ուսանողության միջև: Ընդհանուր 4800 հարցված:

**ԵՊՀ** սոցիոլոգիայի ֆակուլտետի կողմից հարցումը կատարվել է 2015 թվականին Երևանի և սահմանամերձ մարզերի բնակչության շրջանում: Հարցմանը մասնակցել է Երևանից 600, մարզերից 340 ռեսպոնդենտ:

Հետազոտություններն անցկացվել են՝ պահպանելով ընտրանքի բոլոր պահանջները, ուստի դրանց արդյունքները վստահորեն կարելի է տարածել ամբողջ հասարակության վրա: Թեև հետազոտությունների նպատակը չէր պարզել վերոնշյալ հարցի պատասխանը, այնուամենայնիվ, դրանցում ընդգրկված են եղել բաժիններ, որոնց ուղիղ և կոռալյացիոն վերլուծությունները թույլ են տալիս եզրահանգումներ անել հետաքրքրող թեմայի վերաբերյալ:


Ըստ **ԵՊՀ** Սոցիոլոգիայի ֆակուլտետի կատարած ուսումնասիրության հաշվետվության՝ զինապարտ ուսանողների մեծամասնությունը (75%) և միջնակարգ կրթությամբ երիտասարդների մի ստվար զանգված իրենց ապագան (ֆինանսական կայունությունը) տեսնում են Հանրապետությունից դուրս, ուստի նրանք տարբերակներ են փնտրում՝ արտագաղթելու համար: Այս դեպքում առաջնային է ոչ թե զինվորական ծառայությունից խուսափելու, այլ նյութական բավար պայմաններ ունենալու ցանկությունը: Այս մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ «Եթե Երևանում հայ տղամարդու զինվորական ծառայության անհրաժեշտությունը ընդունում է հարցվածների 90,4%-ը, ապա սահմանամերձ բնակչության մոտ այդ թիվը հասնում է 97,9%-ի: Զինվորական ծառայությունից խուսափելն ազգային շահերի ոտնահարում է համարում մարզաբնակ ռեսպոնդենտների 89,6%-ը, իսկ Երևանում միայն 75%-ը ...: Եթե զինծառայությունը պարտադիր չլիներ, ապա միևնույն է Հայոց բանակում պատրաստ են ծառայել Երևանում արական սեռի հարցվածների 63,7%-ը, իսկ մարզերում արական սեռի հարցվածների 83,4%-ը»: Ակնհայտ է, որ ազգային մտածողության մեջ զինվորական ծառայությունը (ծառայությունը հանուն հայրենիքի) բավականին բարձր համարում ունի: Սակայն, եթե հասնում է զորակոչ պահը, անհատներն առերեսվում են ազգային մեկ այլ արժեքի՝ ընտանիքի բարեկեցության (այս դեպքում՝ նյութական) խնդրին, ինչը միջնորդավորված հանգեցնում է արտագաղթի ճանապարհն ընտրելուն:

Բացի այդ, ըստ առկա տվյալների, Երևանի զորակոչային տարիքի երիտասարդները շատ ավելի են հակված ծառայությունից խուսափելուն, քան մարզերի բնակիչները: Սա պայմանավորված է մայրաքաղաքի երիտասարդության կենսական ավելի բարձր ակնկալիքներով և հնարավորություններով: Այսպես, «Եթե ծառայությունը լիներ կամավոր, դուք կծառայեիք բանակում» հարցին դրական են պատասխանել 18-29 տարեկան

Երևանցիների 49%, իսկ մարզաբնակ Երիտասարդների 73.5%: Ակնհայտ է, որ հարցվածների երկրորդ խմբի ներկայացուցիչները պատկանում են նյութական ավելի վատ պայմաններ ունեցող ընտանիքներին, բայց ունեն ավելի ավանդական արժեհամակարգ, որտեղ ծառայությունը հայրենիքին գերակա է անձնական շահերի ու նպատականների հանդեպ:

Այն, որ արտագաղթը պատճառ չէ զինվորական ծառայությունից խուսափելու համար փաստում է նաև ծառայությունը անցանկալի դարձնող գործոնների ուսումնասիրությունը:

Աղյուսակ<sup>1</sup>



Առանձնակի ուշադրության է արժանի «որովհետև չեն վարձատրում» կետը, որն ունի գրեթե ամենացածր արժեքը՝ 2%: Այսինքն՝ նույնիսկ նյութական խրախուսման դեպքում ծառայության տարիները չեն բավարարում բազային այլ կարիքները (կյանքի և արժանավայել ապրուստի՝ այս դեպքում ոչ նյութական):

Այն, որ կյանքին սպառնացող վտանգին (1) հաջորդում է «ժամանակի անհմաստ վատճառում» (2) դիրքորոշումը ևս մեկ անգամ ապացուցում է, որ գործ ունենք արժեհամակարգային խնդրի հետ: Երիտասարդը ցանկանում է կառուցել իր մասնագիտական (բարձրագույն կրթության պարագայում) ապագան կամ ունենալ

<sup>1</sup> ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի կատարած ուսումնասիրության հաշվետվություն

բարեկեցիկ կյանք (կրթական միջին կամ ցածր շեմ ունեցող անձանց դեպքում)` ինչը, իրենց պատկերացմամբ, հնարավոր է արտասահմանում:

### ***Եզրականգում***

Անփոփելով կարող ենք պնդել, որ արտագաղթի և զինվորական ծառայությունից խուսափելու միջև չկա ուղիղ փոխկապակցվածություն, և եթե նույնիսկ սահմանվի խրախուսական նորմ զինծառայությունից խուսափած անձանց համար, ապա այն, մեր կարծիքով, չի ազդի արտագաղթի քանակական ցուցանիշների վրա: Նմանօրինակ նորմը հայրենիքի հետ կապերը պահպանելու միջոց կարող է լինել:

**ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ  
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ, ԿՐԹԱԿԱՆ,  
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ**

07.10.2020թ.